

## **Այցելություն Քաջարան քաղաքային համայնքի նախակրթարան**

06.07.2015

ՀՀ Սյունիքի մարզպետ Սուրիկ Խաչատրյանի որոշման համաձայն օրերս ուսումնասիրություններ են կատարվել Քաջարան քաղաքային համայնքի

<<Քաջարանի նախադպրոցական ուսումնական հաստատություն>> ՀՈԱԿ-ում:

Այցելության ընթացքում հանձնախմբի անդամները տեղում ծանոթացան քաղաքի նախադպրոցական ուսումնական հաստատության սանիտարահիգիենիկ վիճակին, մասնավորապես, սննդի կառուցահատվածի կազմին ու մակերեսներին, խոհանոցի, ինչպես նաև խմբերի սանհանգույցներում սանիտարա-տեխնիկական սարքավորումների քանակին, դրանց տեխնիկական վիճակին:

Առկա թերությունները շտկելու նպատակով տրվեցին մի շարք

հանձնարարականներ, որոնք միտված են աղիքային վարակները կանխարգելելուն

և նախակրթարանի սանիտարահիգիենիկ և հակահամաճարակային վիճակի

պահպանությանը: